ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՄԱՍԻՆ

Հոդված 21. Փրկարար ուժերի գործունեությունը

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման և առօրյա պայմաններում բնակչությանը մասնագիտացված օգնություն ցույց տալու նպատակով ստեղծվում են փրկարար ուժեր, որոնք մշտական պատրաստվածության վիճակում են, ընդգրկում են պետական, հասարակական ու գերատեսչական փրկարարական մասնագիտացված կազմավորումները և արտակարգ իրավիճակներում գործում են կենտրոնացված կառավարման սկզբունքով, արդարացված ռիսկի շրջանակներում:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական և անհետաձգելի վերականգնողական աշխատանքներ կատարելիս փրկարարները կարող են՝

ա) անարգել մուտք գործել ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների տարածքները, իսկ բացառիկ դեպքերում՝ նաև քաղաքացիների բնակարանները.

բ) բացել փակ դռները, պատուհանները, քանդել ցանկապատերը, շինությունները, եթե դրանց առկայությունը խոչընդոտում է փրկարարական աշխատանքների կատարմանը կամ կարող է առաջացնել ծանր հետևանքներ:

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առաջացած արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներում փրկարար ուժերն ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Փրկարար ուժերի կարգավիճակը, փրկարարների, նրանց ընտանիքների, ինչպես նաև փրկարարական աշխատանքներում ընդգրկված ոչ փրկարար քաղաքացիների սոցիալական ապահովության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Փրկարարական աշխատանքների հետևանքով պատճառված վնասների փոխհատուցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Փրկարարների կատարած ապօրինի գործողությունների, ինչպես նաև պետական ~~և ծառայողական~~ կամ առևտրային գաղտնիքի հրապարակման համար նրանց պատասխանատվությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: